ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻՆ՝ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄՇԱԿԵԼԻՍ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Սոսե կանանց հիմնահարցեր»
հասարակական կազմակերպության
նախագահ Լիանա Սահակյանից

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԵՎ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ
ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի՝ գործընկերներ,

Ձեզ ենք ներկայացնում «Սոսե կանանց հիմնահարցեր» հասարակական կազմակերպության կողմից մշակված առաջարկությունների փաթեթը, որն ուղղված է մարզում եւ համայնքում առկա կարծրատիպերի, մասնավորապես՝ կանանց վերաբերյալ վնասակար կարծրատիպերի հաղթահարմանը, ինչպես նաեւ սոցիալ-տնտեսական,
մշակութային եւ քաղաքական գործընթացներում կանանց ակտիվ մասնակցության խթանմանը եւ գենդերային հավասարության ապահովմանը:

Սույն առաջարկությունների փաթեթը մշակվել է 2024 թվականի օգոստոսի 1-ին Գորիսում «Սոսե» ՀԿ-ի կողմից իրականացված միջոցառման ժամանակ տեղի ունեցած քննարկման արդյունքների հիման վրա, որին մասնակցել են համայնքի բնակիչներ, տարբեր մասնագետներ, այդ թվում՝ համայնքապետարանի աշխատակիցներ, սոցիալական աշխատողներ, ուսուցիչներ, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ եւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք:

Այս առաջարկությունները նաեւ համահունչ են եւ բխում են ՀՀ Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարության եւ միջոցառումների ծրագրի նախագծից (2024-2028)՝ ի շահ քաղաքացիների, համայքնի, հասարակության եւ պետության:
Ստորեւ ներկայացնում ենք թեմատիկ առաջարկությունները.

1. Առաջնորդության եւ կառավարման հմտությունների զարգացման ծրագրեր

Առաջարկում ենք Մարզպետի աշխատակազմին եւ Համայնքապետարանին մարզային եւ համայնքային մակարդակում պլանավորել եւ իրականացնել նախաձեռնություններ, որոնք կնպաստեն, մասնավորապես, կանանց եւ աղջիկների (այդ թվում՝ տարբեր խմբերի ներկայացուցիչների, օրինակ՝ տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչներ, հաշմանդամություն ունեցող կանայք եւ աղջիկներ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներ եւ այլն) առաջնորդության, կառավարման եւ որոշումների կայացման հմտությունների զարգացմանը: Նախաձեռնությունները կարող են լինել վերապատրաստումների, մենթորության, հանրային քննարկումների, կլոր-սեղան քննարկումների, դասախոսությունների եւ բանախոսությունների տեսքով, որոնց կարող են ներգրավվել տարբեր մասնագետներ: Առաջարկում ենք նաեւ, որ Մարզպետի աշխատակազմը եւ համայնքապետարանը համագործակցեն մարզային հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ համալսարանների եւ հետազոտական
ինստիտուտների, գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչների եւ Հայաստանում գործող միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, օրինակ՝ Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության պատվիրակության, Ազգային ժողովրդավարության ինստիտուտի, Միջազգային հանրապետական ինստիտուտի, ՀՀ-ում հավատարմագրված եւ գործող դեսպանատների եւ այլ կառույցների հետ:

2. Ձեռներեցության խթանման եւ աջակցման ծրագրեր

Կարեւոր ենք համարում նաեւ Մարզպետի աշխատակազմի եւ համայնքապետարանի կողմից այնպիսի ծրագրերի մշակումն ու իրականացումը, որոնք միտված կլինեն զարգացնելու մարզում/ համայնքում ձեռներեցության համար անհրաժեշտ գիտելիքներ եւ հմտություններ (օրինակ՝ թվային հմտությունների, ծրագրերի կառավարման, ֆինանսական գրագիտության վերաբերյալ թեմաներով), մասնավորապես, կօգնեն մարզի կանանց զարգացնել փոքր եւ միջին բիզնեսներ եւ ստեղծել ու իրականացնել սեփական եւ կայուն եկամուտ ապահովող նախագծերը: Կարծում ենք, որ այս առումով Մարզպետին

կից աշխատակազմը եւ համայնքապետարանը կարող են համագործակցել համապատասխան տեղական եւ միջազգային կառույցների հետ, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների, «Ինփոքթ Հաբ»-ի եւ այլ կառույցների հետ:

3. Իրազեկման արշավներ

Կարեւոր են համարում Մարզպետի աշխատակազմի եւ Համայնքապետարանի կողմից հանրային իրազեկման արշավների իրականացումը, որոնք ուղղված կլինեն մարզում եւ համայնքում առկա կարծրատիպերի հաղթահարմանը: Այս արշավները կարող են ներառել տեղական միջոցառումների եւ սոցիալական մեդիա հարթակների միջոցով համապատասխան տեղեկության տարածում՝ կանանց հավասարության եւ իրավունքների վերաբերյալ թիրախային ուղերձների շեշտադրմամբ: Այս պարագայում եւս Մարզպետի աշխատակազմը եւ Համայնքապետարանը կարող են համագործակցել տեղական ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ, ինչպես նաեւ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ:

4. Հավասարության եւ մարդու իրավունքների վերաբերյալ բաց դաս քննարկումներ

Առաջարկում են կազմակերպել հավասարության եւ մարդու իրավունքների վերաբերյալ թեմաներով քննարկումների շարք մարզի հանրակրթության դպրոցներում: Այդ քննարկումները կարող են ներառել թե՛ ուսուցչական համայնքը, թե՛ դպրոցի վարչական համայնքը, ինչպես նաեւ աշակերտական եւ ծնողական համայքները: Քննարկումները կարող են վարել մարզում ոլորտի առաջատար հասարակական կազմակերպության մասնագետները, հետազոտողները, սոցիալական աշխատողները, մարզի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչները, իրավապաշտպաններ եւ մայրաքաղաքից հրավիրյալ մասնագետներ ու փորձագետներ:

5. Աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ

Կարեւոր են համարում կանանց եւ աղջիկների համար նախատեսված ոչ միայն մասնագիտական զարգացման հնարավորությունների ընդլայնումը, այլ նաեւ նրանց աշխատանքային իրավունքների պաշտպանությունը եւ ապահովումը: Այս առումով առաջարկում են Մարզպետի աշխատակազմին եւ համայնքապետարանին իրականացնել մարզում եւ համայնքում գործատուների հետ այնպիսի համագործակցություն, որի շրջանակում նրանք կարող են իրականացնել աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման միջոցառումներ՝ աջակցելով կանանց եւ աղջիկներին գործատուների հետ արդյունավետ փոխհարաբերություններ ստեղծմանը եւ արդեն իսկ աշխատող կանանց իրավունքների պաշտպանությանը: Այս առումով Մարզպետի աշխատակազմը եւ համայնքապետարանը կարող են համագործակցել ոլորտային կառույցների եւ տեղական հասարակական կազմակերպությունների հետ:

6. Մասնակիցների ընկալումների փոփոխություն

Կարեւոր ենք համարում նաեւ համայնքային քննարկումների կազմակերպումը հենց Համայնքապետարանի կողմից, որոնք կարող են խթանել համայնքներում կանանց եւ աղջիկների դերերի ընկալմանը եւ սոցիալ-տնտեսական ու քաղաքական ակտիվությունը՝ միեւնույն ժամանակ նպաստելով վնասակար կարծրատիպերը հաղթահարմանը: Առաջարկում ենք Համայնքապետարանին քննարկումներին ներգրավել համայնքային աշխատողների՝ ուսուցիչներ, սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, բուժհաստատությունների աշխատակիցներ, այլ մասնագիտական համայնքների ներկայացուցիչներ,
ծնողական եւ աշակերտական համայնքի ներկայացուցիչներ: Կարեւոր է նաեւ քննարկումներին ներառել տարբեր խմբերի կանանց եւ աղջիկների, այդ թվում՝ տարբեր տարիքի, սոցիալական կարգավիճակի, հաշմանդամություն ունեցող, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց եւ աղջիկների:

7. Քաղաքական նախաձեռնություններ

Առաջարկում ենք Մարզպետի աշխատակազմին մշակել եւ կիրարկել այնպիսի քաղաքականություններ, ծրագրեր եւ ծառայություններ, որոնք ավելի շատ կխրախուսեն կանանց մուտքը տարբեր մասնագիտություններ, այդ թվում՝ ոչ ավանդական ոլորտներ, օրինակ՝ բիզնես ոլորտ, քաղաքականություն եւ այլն: Օրինակ, կարելի է մարզում եւ համայնքում գործող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացնել իրազեկման արշավներ, որոնք կնպաստեն կանանց մասնակցությանը հանրային կառավարման ոլորտում,
քաղաքականությունների մշակման գործընթացներում, այդ թվում՝ անվտանգությանը, կլիմայի փոփոխությանը, ձեռներեցությանը վերաբերող ոլորտներում եւ այլն: Խորհուրդ է տրվում համայնքային նախաձեռնություններում եւ բյուջեն պլանավորելիս ներառել հատուկ գործողություններ՝ ուղղված գենդերային հավասարության խթանմանը, օրինակ՝ գենդերային խնդիրների եւ հավասարության վերաբերյալ իրազեկման հստակ օրեր սահմանել եւ միջոցառումների պլան մշակել:

8. Կարծրատիպերի հաղթահարում մարզային, համայնքի առաջնորդների եւ գործիչների միջոցով

Կարեւոր ենք համարում համագործակցությունը տեղական հայտնի մշակութային, քաղաքական եւ առհասարակ հանրային գործիչների եւ կազմակերպությունների հետ՝ վնասակար կարծրատիպերի

հաղթահարման հարցում: Այս առումով Համայնքապետարանին առաջարկում ենք նախաձեռնել միջոցառումներ, որոնք կնպաստեն կանանց ներգրավվածությունը մասնագիտական եւ հանրային գործունեության տարբեր ոլորտներ, օրինակ՝ համապատասխան միջոցառումներին եւ առիթներով պարբերաբար ներկայացնելով հաջողված կանանց օրինակները եւ պատմությունները: Վերջինիս նվիրված արշավներ իրականացնել, որպեսզի բաղաքացիները ճանաչեն եւ գնահատեն իրենց համայնքում գործող կին ձեռներեցներին, հանրային դեմքերին, իրավապաշտպաններին, ակտիվիստներին եւ այլն: Այս գործընթացում կարող են ներգրավվել համայնքի կին եւ տղամարդ առաջնորդները՝ իրենց փորձով կիսվելով եւ ազդելով համայնքում կանանց դերի եւ հեղինակությունն բարձրացման վրա:

9. Կրթություն եւ վերապատրաստում

Մարզպետարանը կարող է իրականացնել կրթական ծրագրեր, որոնք կնպաստեն աղջիկների մասնագիտական կողմնորոշմանը, օրինակ՝ կազմակերպելով հանրային քննարկումներ եւ հանդիպումներ ավագ դպրոցի աղջիկ սովորողների համար տարբեր մասնագետների հետ:

10. Ավագանու անդամների կարողությունների զարգացում

Համընդհանուր սոցիալական դրական փոփոխության համար մեծ է համայնքում ավագանու դերը: Այս առումով կարեւորում են համայնքի ավագանու անդամների համապատասխան կարողությունների զարգացումը, մասնավորապես՝ առաջնորդության եւ բաղաքականությունների մշակման վերաբերյալ, ինչպես նաեւ գենդերային հարցերի վերաբերյալ զգայունության ձեռքբերման եւ արձագանքման համախատասխան մեխանիզմների մշակման վերաբերյալ: Առաջարկում ենք Համայնքապետարանին կազմակերպել ավագանու անդամների համար վերապատրաստումների շարք, որը միտված կլինի վերոնշյալ խնդիրներին եւ թեմաներին: Այս առումով Համայանքապետարանը կարող է համագործակցել տեղական հասարակական կազմակերպությունների հետ:

11. Ավագանու անդամների կարողությունների զարգացում

Հանրային կրթության առումով կարեւոր է սոցիալական կարեւոր թեմաների շուրջ քննարկումներ ծավալելը, այս առումով հնարավոր է եւ խրախուսելի կանանց իրավունքների եւ խնդիրների վերաբերյալ քննարկումների կազմակերպում հետաքրքիր եւ մասնակցային ձեւաչափերի միջոցով, օրինակ՝ համապատասխան գրքերի հանրային ընթերցումներ եւ քննարկումներ կազմակերպելով: Մարզպետի աշխատակազմը եւ Համայնքապետարանը սա կարող են իրականացնել տեղային

գրադարանների, դպրոցների, համալսարանների եւ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

12. Կարիերայի փառատոն

Առաջարկում ենք Համայնքապետարանին կազմակերպել կարիերայի տոնավաճառ՝ ներգրավելով տարբեր անհատ մասնագետների, աշխատաշուկայի ներկայացուցիչների, համապատասխան գերատեսչություններից ներկայացուցիչների հետ (ԱՍՀՆ, ԿԳՄՍՆ, ԿԶՆԱԿ եւ այլ), բիզնես ոլորտի ներկայացուցիչների, որոնք հանդես կգան ելույթներով եւ ուղերձներով՝ կիսվելով միջազգային եւ տեղական առաջատար փորձով եւ աջակցելով համայնքի երիտասարդ կանանց եւ տղամարդ մասնագիտական ընտրության հարցում:

13. Նախագծային ուսուցման խթանում եւ կանանց տեսանելիության բարձրացում

Մարզպետի աշխատակազմը կարող է հանրակրթության նոր չափորոշչով նախատեսված նախագծային ուսուցման միջոցով խրախուսել եւ խթանել մարզպետարանի եւ դպրոցների միջեւ համագործակցությունը՝ խրախուսական մրցանակներ տրամադրել աշակերտներին եւ ուսուցիչներին նախագծային ուսուցման շրջանակում Սյունիքի մարզի կին գործիչների (պատմական եւ ներկայումս գործող կերպարներ, կին գրողներ, դերասաններ, լրագրողներ, բժիշկներ, քաղաքական գործիչներ, որոնք իրենց ներդրումն են ունեցել տարբեր ոլորտներում) վերաբերյալ փոքրիկ հետազոտական աշխատանքներ իրականացնելու եւ արդյունքները համայնքում ներկայացնելու համար:

14. Մենթորության ինստիտուտի ներդրում եւ փորձարկում

Դերային մոդելների կիրառումը մենթորության ինսիտուտի միջոցով հաջող գործիք է համարվում կանանց խրախուսման եւ առաջխաղացման համար: Առաջարկում ենք Մարզպետի աշխատակազմի նախաձեռնությամբ ՀՀ տարբեր ոլորտների առաջատար կին գործիչների, կազմակերպությունների կին ղեկավարների, միջազգային կազմակերպությունների եւ ՀՀ-ում հավատարմագրված դեսպանատների միջոցով համայնքի ավագ դպրոցների աղջիկ սովորողների համար մասնագիտական կողմնորոշման մենթորության ծրագիր իրականացնել:

15. Կանանց իրավունքների ջատագովման մեխանիզմներ

Մարզպետարանը կարող է համագործակցել ՄԻՊ-ի գլխավոր եւ մարզային գրասենյակի եւ այլ

իրավապաշտպան մարմինների հետ՝ կազմակերպելով սեմինարներ կանանց իրավունքների վերաբերյալ դպրոցներում եւ քոլեջներում՝ սովորողների, դասավանդողների, վարչական կազմի, դպրոցների դեպքում նաեւ՝ ծնողական համայնքի համար: Նույն սկզբունքով, համայնքի ոստիկանության եւ քննչական բաժնի հետ կարող է կազմակերպել նույն հաստատություններում հանդիպումներ՝ կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան բռնության կանխարգելման եւ բռնություն վերապրածների պաշտպանության մեխանիզմների, բռնության հետեւանքների, բռնությունից զերծ ապրելու կարեւորության վերաբերյալ՝ նպաստելով ավելի պաշտպանված եւ աջակցող համայնքի ձեւավորմանը:

16. Քաղաքակությունների երկխոսություն

Մարզպետարանը եւ համայնքապետարանը կարող են մշակել մեխանիզմներ եւ հարթակներ/ձեւաչափեր՝ ապահովելու շարունակական երկխոսություն կանանց եւ քաղաքակություն մշակողների միջեւ, որպեսզի կանանց փորձը, փորձառությունը, կարիքները, շահերը, գիտելիքը, հմտությունները եւ տեսակետները հաշվի առնեն տարբեր քաղաքականություններ մշակելիս: Այս առումով կամրջող դեր կարող է ստանձնել ավագանին:

Հուսով ենք՝ մեր առաջարկությունները կնպաստեն մարզի եւ համայնքի զարգացմանն ու սոցիալական առաջընթացին՝ ապահովելով հավասար եւ ներառական միջավայր բոլորի համար:

Մեր կազմակերպությունը իր աջակցությունն է հայտնում վերոնշյալ առաջարկությունների իրականացման հարցերում:

Հարգանքով՝
«Սոսե կանանց հիմնահարցեր»
հասարակական կազմակերպության
նախագահ՝ Լիանա Սահակյան

Այ ս փաստաթո ւ ղթը հնարավոր է դար ձել «Տեղական ինքնակառավարու մ՝ հանու ն Գորիս համայ նքի զարգացման» ծրագրի շ րջանակու մ, որն իրականացվու մ է «Գորիսի մամու լ ի ակու մբ» ՀԿ-ի (ԳՄԱ) կողմից՝ Եվրասիահամագործակցու թյ ո ւ ն հիմնադրամի(ԵՀՀ) հետհամատեղ, Ամերիկայ ի ժողովրդի առատաձեռն աջակցո ւ թյ ամբ՝ ԱՄՆ Միջ ազգայ ին զարգացման գործակալ ու թյ ան (ԱՄՆ

ՄՁԳ) միջ ոցով: Նյ ու թի բովանդակո ւ թյ ու նը միմիայ ն «Սոսե կանանց հիմնահարցեր» ՀԿ-ինն է և պարտադիր չ է , որ արտահայ տի ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարու թյ ան տեսակետները: